ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» ապրիլի 2023թ. Ն ՄՈ/130-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 6.2.1-ին կետի պահանջները.

որոշում եմ՝

1. 2023 թվականի ապրիլի 13-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել «Հայկական ատոմային էկեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն:

2. Շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) Շտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Առնակ Ավետիսյանին

2) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի

մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Հովհաննես Մարգարյանին.

3. Հաստատել՝

1) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Շտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի:

4. Շտաբային ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովին.

3) «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարին, Մրգաշատ գյուղի, Արմավիր համայնքի Մայիսյան, Նորավան, Խոյ համայնքի Արշալույս գյուղերի վարչական ղեկավարներին.

5. Շտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

6. Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023թ. ապրիլի 3-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

3) ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ի N 2 հավելվածը.

4) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

5) ուսումնավարժության անցկացման պատրաստականության մասին զեկուցել 2023թ. ապրիլի 11-ին:

7. Շտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստության հարցերով ակտիվ համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլաններով նախատեսված միջոցառումները:

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Առնակ Ավետիսյանին:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

05.04.2023

X

VERIFIED OCSP 05.04.2023 10:59:28 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505 **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2023թ-ի ապրիլի 05-ի
N ԱՄ/130-Ա որոշման

Կ Ա Զ Մ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Հովհաննես Մարգարյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
2	Կարեն Աբգարյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար
3	Վահան Սրեյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ ՝ խաղարկման և վերլուծության խմբի անդամ
4	Գառնիկ Ղուկասյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ

Գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյան

Недействительная подпись

VERIFIED OCSP 05.04.2023 09:30:11 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2023թ-ի ապրիլի 05-ի
N ԱՄ/130-Ա որոշման

Կ Ա Զ Մ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Հ/հ	Ուսումնավարժության մասնակիցներ	Միջնորդներ	
		Զբաղեցրած պաշտոնը	Անուն Ազգանուն
1	Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողով	Արմավիրի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ	Սևակ Հովհաննիսյան
2	Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողով	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Գառնիկ Մկրտչյան
3	«Մեծամորի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ Ք.Մեծամոր, Մայիսյան, Մրգաշատ, Նորավան , Արշալույս բնակավայրեր	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Արտակ Առաքելյան

Գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյան

Недействительная подпись

VERIFIED OCSP 05.04.2023 09:28:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023